Այլ արդ՝ ցուցանեմ ձեզ մասունքն հասա-
րակօրէն թագաւորութեան, եթէ կամիք ազատ
լինիլ և թագաւորիլ հաւասարապէս ի վերայ աշ-
խարհին ձերոյ և ազատապէս տէր ի վերայ ստա-
ցուածոյ ձերոց, ատանալ պատիւ վասն առաքի-
նութեան ձերոյ, սրբել ազատս անօրէնութեան, և
մաքրել խղճմտանս ձեր՝ հարկաւոր է շինել ձեզ
տունս իմաստութեան ըստ բանին Սողոմոնի
կանգնեցուցանել ձեզ սիւնս խորհրդականօք և
ընտրել ձեզ օրէնս բարիս՝ ըստ կամաց և ըստ
հաճոյից համահաւասար ժողովրդոց ի զօրութենէ
բանական հոգւոյ ձերոյ՝ կալ և ճնալ ձեզ կա-
խեալ ըստ օրինաց ձերոց, զի ոչ ոք իցէ որ իշ-
խեսցէ ի վերայ ձեր, բայց օրէնս ձեր, որում
դուք կազմէք նա թագաւորեսցէ և իշխեսցէ ի
վերայ գործոց ձերոց, զի մի ոք գայթ ճանապարհ
անօրինելոյ, և անօրէնն վասն պատժոյ իւրոյ
դանկատելոյ, քանզի վճիռն գործոյն իւրոյ ինքն
ըստ կամաց և ըստ հաճոյից իւրոց է հատ և ինքն
ըստ անձին ազատապէս թագաւոր գոլով՝ կար-
գադրեաց օրէնս և հրամայեաց թագաւորել ի
վերայ իւրոյ, և ինքն իւրն հնազանդ օրինաց իւրոյ
արար պարտաւոր և ճնայ ընդունիլ հատուցումն
գործոց իւրոց թէ պատիւ եթէ պատիժ ըստ օրի-
նաց իւրոց։

Որպէս սովորութիւնն է՝ ամենայն նորոգոյթ
բան ոչ ոք որում զոր կամի ցուցանել՝ յատկա-